Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս
համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Արայիկ Հակոբյանի, համայնքի ավագանու և համայնքի բնակիչների

13.07.2016թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավար Զարզանդ Գրիգորյանը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> և այլ ՀՀ օրենքներով , համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:
2016 թվականի 1-ին կիսամյակում համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները: Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2016 թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացվում են Ձեզ:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում որպես պարտադիր լիազորություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը բոլոր կարգի հարաբերություններում և մակարդակներում: Կազմակերպվել է թվով 80 քաղաքացիների ընդունելություն, հատկացվել է 370 տեղեկանք, 8 բնակչի հատկացվել է բնութագիր, ընթացք է տրվել քաղաքացիների կողմից ներկայացված 85 դիմումների, որոնցից շատերին հատկացվել է դրամական օգնություն, իսկ մնացած դիմումներին համապատասխան ընթացք է տրվել: Քաղաքացիների կողմից այլ բողոքներ չեն եղել:
Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվել է միջոցներ կարկտահարության տարերային աղետները վերացնելու ուղղությամբ՝ համայնքում տեղադրված երկու հակակարկտային կայանների գործարկման միջոցով:

2016 թվականի մարտի 17-21-ը համայնքում ցրտահարության հետևանքով ծիրանի այգիները տուժած բնակիչների ցանկը ներկայացվել է Արմավիրի մարզպետարան աջակցություն ստանալու ակնկալիքով: Հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները, ինչպես նաև եռամսյակների կատարողականները:Համայնքի ղեկավարը տնօրինել է բյուջեի միջոցները և ապահովվել դրանց նպատակային օգտագործումը՝

2016 թվականի 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

N	անվանումը	տարեկան պլան	2016թ. 1-ի կիսամյակ	կատարողական %
			փաստացի	տարեկան
1	հողի հարկ	17500.0	4857.7	27.76
2	հողի վարձավճար	3082.8	784.2	25.4
3	գույքահարկ շենքերի և շինությունների	2300.0	441.1	19.2
4	գույքահարկ փոխադրամիջոցների	6000.0	2107.3	35.1
5	այլ ոչ հարկային եկամուտներ	329.0	270.0	82.0
6	դոտացիա	57703.4	28980.2	50.0
7	տեղական տուրքեր	755.0	184.7	24.5
8	տեղական վճարներ	2000.0	320.4	16.0
9	պետբյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		195.0	
10	գույքի վարձակալության վճար	1010.0	450.0	44.6
11	մուտքեր վարչական իրավախախտումներից	20.0	200.0	
12	քաղաքացիների կամ իրավ. անձ.սեփ. իրավունքով պատկանող ինքնակամ շինության գումար	200.0	431.5	
	ԸՆԴԱՄԵՆԸ	90900.2	39222.1	43.2

2016 թվականի 1-ին կիսամյակում կատարված ծախսերը

հազար դրամ

N	ծախսերի անվանումը	2016թ.	
		1-ին կիսամյակի պլան	փաստացի
1	աշխատավարձ	16504.0	11275.4
2	Արտադպրոցական դաստիարակություն	8472.8	4959.0
3	էներգետիկ ծառայություններ	2800.0	1324.5
4	կապի ծառայություններ	135.0	121.4
5	ապահովագրական ծախսեր	140.0	133.7
6	համակարգչային ծառայություններ	114.0	50.4
7	տեղեկատվական ծառայություններ	75.0	27.0
8	վարչական սարքավորումներ	194.0	193.0
9	Մշակութային միջոցառումներ	4000.0	3309.0
10	մասնագիտական ծառայություններ	70.0	68.7
11	մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	70.0	40.0
12	շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	1000.0	990.0
13	գրասենյակային նյութեր	200.0	180.0
14	տրանսպորտային նյութեր	5061.7	2282.2
15	կենցաղային և հանրային սննդի նյութեր	100.0	100.0
16	ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1000.0	826.0
17	ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	390.0	390.0
18	այլ կապիտալ դրամաշնորհներ	2000.0	1971.0
19	այլ նպաստներ բյուջեից	7000.0	4790.0
20	<<Կրթություն և մշակույթ>> ՄՏ	4695.5	3277.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	54022.0	36308.3

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել նաև քաղաքաշտպանության մարմինների գործունեության, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, զինծառայողների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Հաստատվել է բնակչության տարահանման պլանը, քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես նաև կազմակերպվել և անցկացվել է շտաբային ուսումնավարժություն << ՀԱԷԿ-ի ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը >> թեմայով: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության մեկնած զինակոչիկներին հատկացվել է գումար 10000-ական դրամի չափով:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները և վերջինիս հիման վրա իրականացվել բնակչությունից կենցաղային և շինարարական աղբի հավաքումը և տեղափոխումը: Աղբահանությունն իրականացվել է ամենօրյա ռեժիմով: Աղբը կուտակվում է ավագանու որոշմամբ հաստատված համայնքից 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայրում: 2016թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աղբահանության համար հատկացվել է 1935.0 (մեկ միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար) դրամ: Համայնքի ղեկավարի կողմից ապահովվել է համայնքի գիշերային լուսավորությունը: Կազմակերպվել է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ:Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հսկողություն է իրականացվել առևտրի ծառայությունների ոլորտում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Իր իրավասության սահմաններում կազմակերպել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ:Եկեղեցու տոների կազմակերպվել են միջոցառումներ եկեղեցու

բակում: Փետրվարի 27-ին, Արշալույսի Սամվել Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի հետ կազմակերպվել է միջոցառում նվիրված Սամվել Գրիգորյանի ծննդյան օրվան: Գարնանամուտի կապակցությամբ կազմակերպվել է հյուրասիրություն համայնքի բնակիչների համար համայնքի սրբավայրում, որի համար հատկացվել է 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար: Մարտի 8-ին՝ կանանց միջազգային տոնի առթիվ, 200 ծերության և հիվանդության թոշակ ստացող կանանց, ինչպես նաև ուսանողներին հատկացվել է նվերներ և ծաղիկներ:Իսկ միջնակարգ դպրոցի ուսուցիչների, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների, բժշկական ամբուլատուրիայի և գյուղապետարանի աշխատակիցներին, համայնքի մի քանի բնակիչներին նվիրվել է ծաղիկներ, որի համար հատկացվել է 781000 (յոթ հարյուր ութսունմեկ հազար) դրամ: Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ի և միջնակարգ դպրոցի աշակերտների կողմից կազմակերպվել է միջոցառումներ, ինչպես նաև Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմը այցելել է <<Ծիծեռնակաբերդ>> իրենց հարգանքի տուրքը մատուցելու զոհերի հիշատակին: Մայիսի 9-ին <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության, <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ի, բժշկական ամբուլատորիայի, համայնքապետարանի աշխատակիցների, դպրոցի ուսուցիչների և աշակերտների, համայնքի բնակիչների մասնակցությամբ ծաղիկներ և ծաղկեպսակ են դրվել երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանին, որի համար հատկացվել է 30000 /երեսուն հազար/ դրամ: Մայիսի 28-ին Սարդարապատի ճակատամարտում թվով 2 զոհվածի գերեզմաններին դրվել է ծաղկեպսակ: Արշալույս համայնքի Սամվել Գրիգորյանի անվան պետական ոչ առևտրային կազմակերպություն միջնակարգ դպրոց հաճախող 12-րդ դասարանն ավարտող աշակերտներին վինետկա նվիրելու համար հատկացվել է 220000 (երկու հարյուր քսան հազար) դրամ գումար: Նախադպրոցական 1 խմբի դաստիարակի աշխատավարձի համար համայնքի բյուջեից տրամադրվել է 390000 /երեք հարյուր իննսուն հազար/ դրամ:

2015 թվականի հոկտեմբերի 19-ին Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանի և Արշալույս համայնքի ղեկավար Զ. Գրիգորյանի միջև կնքված <<Արշալույս գյուղի կիսակառույց մանկապարտեզի շենքի շինարարության ավարտ>> ծրագիրն իրականացնելու հիմնական համաձայնագրի համաձայն որպես համայնքի ներդրման մաս 13970750 /տասներեք միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ գումարից մնացած 1970750 /մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ գումարը հատկացվել է 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով, կերակրողին կորցրած և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 4575000 (չորս միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումար:

Հատկացվել է 260000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ գումար համայնքում ծնված թվով 13 երեխաների ծնողներին: Կիրառվել է գույքահարկի գծով արտոնություն համայնքի սոցիալապես անապահով թվով 1 ընտանիքի նկատմամբ : Համայնքի բժշկական ամբուլատորիայի շտապ օգնության մեքենայի համար հատկացվել է դիզելային վառելիք, ինչպես նաև 90000 /իննսուն հազար/ դրամ գումար մեքենան վերանորոգելու համար: Համայնքի ղեկավարը՝ համայնքի բնակչի հուղարկավորության դեպքում, հատկացնում է անվճար դիակառք:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղմթերքների իրացմանը: Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ: Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորությունների շրջանակում նպաստել է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործմանը: Մարզպետարանից տրամադրվել է ՀՀ կառավարության կողմից հատկացված շուկայական գնից էժան 110 տոննա ազոտական, 7.1 տոննա կալիումական, 4.6 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, ավելի քան 9734 լիտր դիզելային վառելիք, որը բաժանվել է համայնքի բնակիչներին՝ ըստ ցանկության : Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է հացահատիկահավաք կոմբայնի տեղափոխում:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 16 որոշում, արձակվել է 10 կարգադրություն: Ավագանու գործունեությունը կազմակերպվել է հաստատված կանոնակարգի հիման վրա, կայացրած 6 նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու կողմից քննարկվել են համայնքի շահերին վերաբերվող հարցեր և կայացվել են 34 որոշումներ: Հաստատվել են համայնքի 2016 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները, սանիտարական մաքրման սխեման, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը, համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, համայնքում բաց լսումների և քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը, համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը, համայնքի 2016 թվականի բերքի տակ բնակչության տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը, հողային հաշվեկշիռը: Քննարկվել և հաստատվել է <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու, ինչպես նաև համայնքի շահերից բխող այլ հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի ամենօրյա օգնությամբ իրականացվել են միջնակարգ դպրոցի, բժշկական ամբուլատորիայի արդյունավետ գործունեությունը, որոնք իրենց լիազորությունների սահմաններում բարեխիղճ և պարտաճանաչ կերպով սպասարկել են ազգաբնակչությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում
2. Ոռոգման ջրի խողովակաշարի անցկացումը
3. Մշակույթի տան կապիտալ վերանորոգումը
4. Դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի հուլիսի 13
գ. Արշալույս

ՈՒՂԵՐՁ

Արշալույս համայնքի ընդհանուր ժողով

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմել Ձեզ՝

1. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգման
2. Ոռոգման ջրի խողովակաշարի անցկացման
3. Մշակույթի տան կապիտալ վերանորոգման
4. Դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգման

Հարցերի վերաբերյալ խնդրվում է Ձեր միջնորդությունը առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ